ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2024 թվականի N 1813 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 210-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» վարկային համաձայնագրի շրջանակներում աշխատանքների կազմակերպման մասին» N 210-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման վերնագրում «վարկային համաձայնագրի» բառերը փոխարինել «վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի» բառերով.

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով՝

«2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների

կառավարման ծրագրի» մասով նախատեսված համաֆինանսավորման գումարներից փոխանցել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ ծրագրի շրջանակներում աղբահանության համար մասնագիտացված մեքենաների ու այլ սարքավորումների ձեռքբերման և աղբամանների հարթակների կառուցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր կողմից իրականացված գնումների գործընթացի արդյունքներով համապատասխան պայմանագրերի հիման վրա մատակարարող և կապալառու ընկերություններին վճարումներ կատարելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ